ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք.Աշտարակ 2025թ. Նոյեմբերի 28-ի N 388 -Ա

ՀՐԱՏԱՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԳՆՄԱՆ ՀԱՅՏԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-Ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման 21-րդ կետի 1-ին ենթակետի դ) պարբերությամբ, ինչպես նաև հիմք ընդունելով այն հանգամանքը, որ արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակից ելնելով, գնման այլ ձևերի կիրառումը ժամկետի առումով անհնար է.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

Թույլատրել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի կարիքների համար ՀՀ Արագածոտնի մարզային /տեղական/ նշանակության ավտոմոբիլային ճանապարհների գծանշման (այդ թվում՝ կահավորանք, ճանապարհային նշանների տեղադրում) աշխատանքների ձեռքբերումն իրականացնել հրատապության հիմքով՝ մեկ անձից գնման ընթացակարգով:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 11/28/2025 11:54:27 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ